

ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆ

02 հոկտեմբերի 2012թ. N 927-Ն

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2009 թ. հուլիսի 9-ի N 808-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 5.3, NN 3, 5, 7, 11, 13 հավելվածների 5.2, NN 17, 19 հավելվածների 7 կետերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

Լիցենզավորված անձանց կողմից կրթական ծրագրերով լիցենզավորվող մարմիններ կայացվող լիցենզավորված գործունեությանն առնչվող հաշվետվության ձևերը՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8 հավելվածների:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության և իրավաբանական վարչության պետերին՝ սույն հրամանը օրենքով սահմանված կարգով ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱՐԱՐ՝

Ա. ԱՇՈՏՅԱՆ